



Զահրատ

Հանդես

Շատ եզակիան հանդես մըն է ասիկա
Մուտքն ազատ ելքը չես գիտեր երբ ինչպէս
Երբ ականայ ինքզինքդ հոս կը գտնես
Դոյլ մը պարան մը կու տան ձեռքդ իսկոյն
Կը մտնես դուն ալ միւսներուն կարգին մէջ
Բոլորդ մէկ շուրջանակի կը շարուիք
Աշխարհադէզ բազմութեամբ մը խայտաբղետ
Աշխարհակուլ աւագանի մը շուրջին
Աւագանէն դոյլ դոյլ ապրում կը քաշէք

Ոմանց պարանն երկար կ'ըլլայ մինչեւ յատակ կը հասնի
Ապումներուն գեղեցկագոյնը կը գատէ խորերէն
Ոմանցը կարճ եւ այնքան կարճ որ փոխանակ գուտ նիւթի
Միայն փրփուր պղպշակով անոնց դոյլը կը լեցուի
Ոմանց դոյլը կ'ըլլայ ընտիր կ'ըլլայ խոշոր՝ կեանքի չափ
Ոմանցը փոքր ոմանցը ծակ հետեւաբար միշտ դատարկ
Ոմանց բարակ կ'ըլլայ պարանն ու դեռ կ'էսին կը փրթի
Ոմանց ոսկի դոյլեր կու տան ոմանց դոյլեր ժանգոտած

Բայց շարունակ բայց անդադար աւադանէն ապրումի
Իւրաքանչիւրն իր բաժինը կը քաշէ

Իսկ ես անոք անտիրական գրկանքներով ճիտս ծուռ

Մէկ ձեռքիս դոյլ միսին պարան այդպէս ապշած կը կենամ
Այս հանդէսէն դուրս գամ հոգիս ապրումներով ճոխացած

Շատ եզակիան հանդէս մըն է ասիկա
Իսկ ես այսպէս հանդիսատես կը մնամ